

Չարց Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ջրային ոլորտում գործունեության լիցենզիա ստանալու համար:

Պատասխան Հանձնաժողովի 2020թվականի հուլիսի 31-ի N 39-Ն որոշման համաձայն, ջրային ոլորտում գործունեության լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը, որոնք ներկայացվում են 2 օրինակից`

1) գործարար ծրագիրը կամ մրցութային եղանակով ջրամատակարարման (ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման) համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագրի պատճենը,

2) ջրօգտագործման թույլտվության (թույլտվությունների) պատճենը (ները),

3) լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթերի պատճենները,

4) լիցենզավորված գործունեությունն իրականացնելու սպասարկման տարածքի ցանկը,

5) հայտարարություն մամուլում` առնվազն 500 և ավելի տպաքանակ ունեցող թերթում:

2. Մրցութային եղանակով ջրամատակարարման (ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման) համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման դեպքում հայտատուն սույն հավելվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի փոխարեն, Հանձնաժողով է ներկայացնում Արցախի Հանրապետության կառավարության հետ կնքված համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագրով` մասնավոր կառավարչին փոխանցված գույքի ցանկը: